


# Շրջակա

Ջերմամուտ  
2019-2020



# Փոքրիկ





**Հագարումէկ  
հէքեաթ...  
Երգ ու պար  
ուրախ գուարթ**

**Փոքրիկ**

# Շրջուն Յեթաթատոս 2019-2020

ՓՈՔՐԻԿՆ, մանկանց՝ լսելու, ըմբռնելու, մեկնաբանելու, երագելու եւ ստեղծելու ընդունակութիւնները զարգացնելու նպատակով կը ձեռնարկէ շարք մը ծրագիրներ: Զետեւաբար «Յեթաթատոս»ը կը սփռէ ամբողջ տարուայ մը, եւ կը շրջի վարժարանները «Շրջուն Յեթաթատոս» խորագրով:

## ԹԱԼԻՆ ԶՈՐԹԱՆ ԿԱՐԻՊԿԻՒՆԻ...

## ԼԱՐԱ ՆԱՐԻՆԻ...


## ԹԱՐԱ ՏԵՄԻՐՃԻՕՂԼՈՒԻ ԶԵՏ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐ

- ՄԱՅՐՍ ԿԸ ՓԱՓԱՔԻ, ԲԱՅՑ ԵՍ Ո՛Չ
- ԵՐԱՉՆԵՐԸ ԱՆՍԱՅՄԱՆ
- ԻՆՏԻ ԻՆՉ ԲՆՈՒԹԵՆԵՆ
- ԻՆՉ ԲԱՆԻ ՊԵՏԸ ՈՒՆԻՆԸ
- ՍԻՐՈՒՆԻԿ ՆԱԽՇՈՒՆ ԿԱՔԱԲԻԿ
- ՓՈՔՐԻԿԻՆ ՓԱՓԱՔԸ
- ՊԱՐԵԼ ԿՈՄԻՏԱՍՈՎ
- ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ ԿԸ ՅՕՐԻՆԵՆԸ
- ԶԱՍՈՎ ԶԵՔԵԱԹՆԵՐ ԵՒ ԱՆՈՒՇԵՂԵՆՆԵՐ
- ԿԱՂԱՆԴԻ ԽՈՅԱՆՈՑ
- ՓՈՔՐԻԿ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐ
- ԿԱԹԻԼ ՄԸ ՄԵՂՐՈՎ ԹԵ ԴԵՐԱՍԱՆ, ԹԵ ԴԻՏՈՂ



Հազարումէկ հեքեթաթ... Երգ ու պար ուրախ զուարթ

# ԹԱԼԻՆ ՉՈՐԹԱՆ ԿԱՐԻՊԿԻՆ «ԲԵՂՈՒՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ»



## ՄԱՅՐՍ ԿՐ ՓԱՓԱՔԻ, ԲԱՅՑ ԵՍ Ո՛Չ

Մեծերը յաճախ մեզմե բաներ մը կը պահանջեն: Կը պահանջեն մեր ապահովութեան կամ լաւութեան համար (միշտ այնպէս կ'ըսեն) այնպիսի բաներ, որոնք շատ անգամ չենք կրնար, կամ չենք սիրեր ընել: ՓՈԶՐԻԿԻ երկու հեքեաթները՝ «Մայրիկին Փափաքը» եւ «Մաման Գոհ Չէ» այս աշխատութեան մեկնակետերը կ'ըլլան: Նախ կը գրուցենք հեքեաթներու վրայ, յետոյ փոքրիկները կը գրեն իրենց փափաքները: Թերեւս նամակ մը, կամ սիրուն երկտողիկ մը:

### 2-րդ եւ 3-րդ դասարաններ

🕒 Ընթացք՝ 45 վայրկեան

🗨 Աշխատանցի լեզուն՝ **Հայերէն**

📄 Վայր՝ պարապ սենեակ մը կամ սրահ մը

👥 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ

📁 Պիտոյք-Պատրաստութիւն՝ գունաւոր մատիտներ, գունաւոր թուղթեր եւ խաւքարտներ

## ԵՐԱՉՆԵՐԸ ԱՆՍԱՅՄԱՆ



Ո՛վ կրնայ սահմանել մեր երազները: Երբ մեր աչքերը գոցենք, մենք՝ մեզ կրնանք երեւակայել ամէն տեղ: Երբեմն տիեզերանաւով մը կը ճամբորդենք, երբեմն կ'երթանք բելեռներ...: «Պտըտիլ Սիրող Ծառը» խորագրեալ հեքեաթը պատմելէ ետք, փոքրիկներուն հետ կը ճամբորդենք դէպի երեւակայութեան աշխարհ: Անոնք գունաւոր մատիտներով իրենց երազային երկիրը կը գծեն թուղթերու վրայ:

### 3-րդ եւ 4-րդ դասարաններ

🕒 Ընթացք՝ 45 վայրկեան

🗨 Աշխատանցի լեզուն՝ **Հայերէն**


📄 Վայր՝ դասարան

👥 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ

📁 Պիտոյք-Պատրաստութիւն՝ գունաւոր մատիտներ եւ գծագրութեան թուղթեր



Հազարումէկ հեքեաթ... Երգ ու պար ուրախ գուարթ



## ԻՆՏԻ ԻՆՉ ԲՆՈՒԹԵՆԵՆ

«Վարդի Փուշը» եւ «Ծառերու Թագաւորը» հեքեաթները ուղեցոյց կ'ըլլան մեր այս աշխատաժողովին, որուն շնորհիւ փոքրիկները կ'ըմբռնեն բնութիւնը: Հետեւաբար կը հասնին՝ «Բնութեան մէջ ինչ որ գոյութիւն ունի, ունի իր դերը», «Բնութիւնը իր մէջ ունի ներդաշնակութիւն» գիտակցութեանց: Այս ուղղութեամբ փոքրիկները տրամայի մեթոտով յանկարծախօս կը վերաստեղծեն վերոյիշեալ հեքեաթները:

### 4-րդ եւ 5-րդ դասարաններ

🕒 Ընթացք՝ 45 վայրկեան

📄 Վայր՝ դասարան

📁 Պիտոյք-Պատրաստութիւն՝ չկայ

💬 Աշխատանցի լեզուն՝ Հայերէն

👥 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ

## ԻՆՉ ԲԱՆԻ ՊԵՏՔ ՈՒՆԻՆՔ



Մարդիկ իրապէս ամենէն շատ ինչ բանի պետք կ'ունենան: Ինչ է ամենակարեւոր բանը մարդոց համար: Երբեմն սեր, երբեմն թուաբանական գիտելիքներ, թերեւս խելք, եւ կամ փափաքներ իրականացնելու համար՝ քաջութիւն...: Այս անգամ ալ, «Ամենէն Պիտանի Բանը» հեքեաթը կը լուսաբանէ փոքրիկները: Անոնց հետ միասին կը փնտռենք մարդու հոգեկան աշխարհին ամենամեծ պահանջը: Միասնաբար կը պատրաստենք այն ծառը, որուն վրայ կը կախենք մեր մաղթանքները, իրականանալու յոյսով:

### 5-րդ եւ 6-րդ դասարաններ

🕒 Ընթացք՝ 45 վայրկեան

📄 Վայր՝ դասարան

📁 Պիտոյք-Պատրաստութիւն՝ գունաւոր մատիտներ եւ նկարչութեան թուղթեր, քրաֆթի թուղթ

💬 Աշխատանցի լեզուն՝ Հայերէն

👥 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ



Հազարումէկ հեքեաթ... Երգ ու պար ուրախ զուարթ



## ԹԱԼԻՆ ՉՈՐԹԱՆ ԿԱՐԻՊԿԻՆ

Աւարտած է Անատոլու համալսարանի ընկերաբանութեան ճիւղը: Մասնակցած է Պիլկի համալսարանի փիլիսոփայական դասախօսութիւններուն, «Ժամանակակից Թատրերգութեան Միութեան» ստեղծագործ թատրերգութեան մանկավարժական ծրագրին: Աշակերտի ուղեկցութեան եւ մտային խաղերու ուսուցչութեան վկայականներ ստացած է:


1998-ին Ակօս թերթի Հայերէն էջերուն մէջ պատրաստեց «Ակօսիկ» մանկական բաժինը: Աշակերտներու հետ կատարած Հայերէն ստեղծագործական շարադրութեան աշխատութիւններու մէկ մասը հաւաքելով հրատարակեց «99 գրող 4 հեքեաթ» գիրքը: Հայերէնի բառապաշարին նպաստող «Սուտօքու»ի եռահատորը հրատարակուեցաւ 2018 թուականին Արաս հրատարակչատան կողմէ: Փոքրիկի հեքեաթներու կայքէն ներս հրապարակուեցաւ իր «Անմոռանալի Կաղանդի Գիշեր Մը (Արշալոյս Ունճույի հետ) եւ «Վարդի Փուշը» հեքեաթները: 2015 թուականէն առ այսօր Մարմարա Օրաթերթի մէջ կը հրատարակուին յօդուածները:

2008 թուականէն սկսեալ մանկապարտեզներու եւ նախակրթարաններու մէջ Ստեղծագործական Թատրերգութեան, Մտային խաղերու, Մտային Ընդունակութեան եւ Ուսուցման, Մարդու Իրաւունքներու, Ժողովրդավարութեան եւ Քաղաքացիութեան դասերը վարող Կարիակիւն, դեր կը դասաւանդէ Օրթագիւղի Թարգմանչաց Վարժարանի մէջ Հայերէն եւ Կրօնագիտութիւն, իսկ Բանկալթի Միխիթարեան Վարժարանի մէջ Մտային Ընդունակութիւն եւ Ուսուցում:



Հազարումէկ հեքեաթ... Երգ ու պար ուրախ զուարթ

# ԼԱՐԱ ՆԱՐԻՆԻ ՀԵՏ «ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐ»



## ՍԻՐՈՒՆԻԿ ՆԱԽՇՈՒՆ ԿԱՔԱՒԻԿ

«Աղանի եւ Մրջին» հեքեաթը ընթերցելէ ետք, նախ իր մանկութեան շրջանէն փոքր դրուագներով կը ծանօթացնենք Կոմիտասը, յետոյ միասնաբար կ'երգենք՝ «Կաթաւիկ» երգը եւ կը պարենք ազատօրէն:

### Մանկապարտեզ, 1, 2, 3-րդ դասարաններ

🕒 Ընթացք՝ 45 վայրկեան

🗨 Աշխատանցի լեզուն՝ **Հայերէն**

📖 Վայր՝ պարապ սենեակ մը կամ սրահ մը

👥 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ

📁 Պիտոյք-Պատրաստութիւն՝ **Ձայնային համակարգ (բարձրախօս)**

## ՓՈՔՐԻԿԻՆ ՓԱՓԱՔԸ



Հարուածային սուագարաններու ընկերակցութեամբ զուարճալի ճամբորդութիւն մը: «Մայրիկին Փափաքը» հեքեաթը ընթերցելէ ետք, մէկ մէկ սուագարանները կը ճանչնանք, համաչափութիւններու հետ կը խաղանք եւ մեր երգը կը փնտռենք:

### Մանկապարտեզ, 1, 2, 3-րդ դասարաններ

🕒 Ընթացք՝ 45 վայրկեան

🗨 Աշխատանցի լեզուն՝ **Հայերէն**

📖 Վայր՝ դասարան


👥 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ

📁 Պիտոյք-Պատրաստութիւն՝ **Նուագարաններ**



Հազարումէկ հեքեաթ... Երգ ու պար ուրախ զուարթ

## ՊԱՐԵԼ ԿՈՄԻՏԱՍՈՎ



Նախ «Ամենէն Պիտանի Բանը» հեքեաթը կը պատմենք: Յետոյ, կարճ կերպով՝ Կոմիտասի ստեղծագործութիւններէն օրինակներով՝ անոր մանկութեան եւ արուեստի մասին կը զրուցենք: Ստեղծագործական պարի եւ շարժումի աշխատութիւններէն օգտուելով Կոմիտասի յօրինած եւ հաւաքած երգերով կը պարենք ազատօրէն:

### 5, 6, 7, 8-րդ դասարաններ

- Ընթացք՝ 45+45 վայրկեան, երկու դասապահ
- Աշխատանցի լեզուն՝ Գայերէն
- Վայր՝ պարապ սենեակ մը կամ սրահ մը
- Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ
- Պիտոյք-Պատրաստութիւն՝ Զայնային համակարգ (բարձրախօս)



## ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ ԿԸ ՅՕՐԻՆԵՆՔ

Միասնաբար կը յօրինենք բարեկամութեան վրայ երգ մը: Նախ կը պատմենք յետոյ քիչ մը կը զրուցենք՝ «Բարեկամի Օգնութիւն» հեքեաթին վրայ: Ապա համաչափութեամբ, մեղեդիով եւ խօսքերով կը յօրինենք մեր Բարեկամութեան Երգը: Հարուածային Նուագարաններու ընկերակցութեամբ, յանկարծաբանութեամբ զարգացող զուարճալի ճամբորդութիւն մը:

### 5, 6, 7, 8-րդ դասարաններ

- Ընթացք՝ 45 + 45 վայրկեան
- Աշխատանցի լեզուն՝ Գայերէն
- Վայր՝ դասարան
- Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ
- Պիտոյք-Պատրաստութիւն՝ Նուագարաններ



Հագարումէկ հեքեաթ... Երգ ու պար ուրախ զուարթ





## ԼԱՐԱ ՆԱՐԻՆ

Աւարտած է Եղլտըզ Թեքնիք համալսարանի բնապահպանական ճարտարագիտութեան եւ Իսթանպուլի Պետական Երաժշտանոցի երաժշտական թատրոնի ճիւղերը: Մասնակցած է դերասանութեան, երաժշտութեան եւ պարի ոլորտներու աշխատանոցներու՝ ՊԱՌԻ Ճագի Ակադեմիայի, ՏԱՆՍԵԹՐՈՒՄԻ, Kumbaracı50-ի, Թիյաթո Մետրեսիի, Ոսկէ Ծիրան Երեւանի Միջազգային Ֆիլմի Փառատօսի, ՄՍԿՍԻԻ-ի Ժամանակակից Պարի նման զանազան հաստատութիւններու երդիկին տակ: Այս աշխատանոցներու մէջ կան նաեւ ճագ երգելու, յանկարծաբանութեան, մարմնակրթութեան, բանաստեղծական կատակերգութեան, քամերայի դիմաց դերասանութեան աշխատութիւններ:

Չանագան թատրոններու եւ երաժշտական թատերախաղերու մէջ դեր ստանձնող Լարա Նարին, «Յանկարծ» խումբի հիմնադիրներէն է եւ իր հեղինակած «Մեր Զունեցածը Իրարմով Գտնենք» թատերախաղը 2019 թուականին Սերպիոյ մէջ միջազգային փառատօսի մը մէջ բեմադրուեցաւ: Որպէս «Ոմանք» խումբի մենակատար՝ Իսթանպուլի, Պերլինի եւ Մոսկուայի մէջ համերգներ ունեցաւ: «Անուշ Ըլլալ» ներկայացման մէջ պարեց: Բանկալթի Սանուց Միութեան մէջ Տարիօ Ֆոյի կարճ թատերախաղերը բեմադրեց:



Հագարումէկ հեքեաթ... Երգ ու պար ուրախ զուարթ

# ԹԱՐԱ ՏԵՄԻՐԾԻՕՂԼՈՒԻ ՅԵՏ «ՃԱՇԻ ԵՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐ»



## ՀԱՍՈՎ ՀԷՔԵԱԹՆԵՐ ԵՒ ԱՆՈՒՇԵՂԵՆՆԵՐ

Այս աշխատաժողովը, նոր հեքեաթներ համտեսելու եւ տարբեր համեր զանազանելու վրայ ծրագրուած է: ՓՈՔՐԻԿԷՆ ընտրուած երկու հեքեաթներու թեմաներուն վրայ մէկ կողմէն կը զրուցենք, իսկ միւս կողմէն իրարու օգնելով՝ միասնաբար կը պատրաստենք մեր անուշեղէնները: Հեքեաթներու հերոսները եւ խոհանոցի պիտոյքները կ'ընկերակցին մեր հեքեաթներուն: Երբ հեքեաթները կը տաքցնեն մեր սրտերը, պատրաստուած անուշեղէններն ալ կը քաղցրացնեն մեր քիմքերը:

### 2, 3, 4-րդ դասարաններ

🕒 Ընթացք՝ 45+45 վայրկեան

🗨️ Աշխատանոցի լեզուն՝ Հայերէն

📄 Վայր՝ վարժարանի ճաշարանը 🍷 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ

📁 Պիտոյք-Պատրաստութիւն՝ ճաշի համար պիտանի բաղադրիչներ



## ԿԱՂԱՆԴԻ ԽՈՐԱՆՈՅ

Կաղանդի մասին շատ համեղ զանազան հեքեաթներ եւ կաղանդի սեղանին համար հրաշալի կրկնեփներ... Նախ միասնաբար կը կարդանք «Տօնածառ v» եւ յետոյ կ'ուղղուինք դպրոցի խոհանոցը, որպէսզի պատրաստենք մեր յատուկ կրկնեփները, որոնք պիտի զարդարեն մեր կաղանդի սեղանը: Անշուշտ, չենք մոռնար նաեւ գրելու մեր մաղթանքները, որոնք պիտի կախենք տօնածառի վրայ:

### 2, 3, 4-րդ դասարաններ

🕒 Ընթացք՝ 45+45 վայրկեան

🗨️ Աշխատանոցի լեզուն՝ Հայերէն

📄 Վայր՝ վարժարանի ճաշարանը 🍷 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ

📁 Պիտոյք-Պատրաստութիւն՝ Կրկնեփի համար պիտանի բաղադրիչներ



Հագարումէկ հեքեաթ... Երգ ու պար ուրախ զուարթ

## ՓՈՔՐԻԿ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐ

Այս աշխատաժողովը ունի երկու հանգրուան: Առաջին շաբթուան մեջ, փոքրիկները նախ լուսանկարչության վրայ տեղեկություններ կը ստանան: Յետոյ ՓՈՔՐԻԿԷՆ կը դիտեն «Մեր Թաղին Լակոտները» խորագրեալ հեքեաթաշարքը, որոնցմէ օգտուելով կ'որոշեն իրենց թաղերուն վրայ աշխատելիք լուսանկարչական թեմաները. կը կազմեն խումբեր. եւ թեմաները կը բաժնեն իրենց միջեւ: Անոնք շաբթուայ մը ընթացքին կ'աշխատին իրենց բաժին ինկած թեմաները լուսանկարելու համար: Իսկ յաջորդ շաբաթ լուսանկարները տպելէ ետք կը կազմենք քուլաժ մը եւ կը կերտենք հեքեաթը:

### 5, 6, 7, 8-րդ դասարաններ

- 🕒 Ընթացք՝ 2 շաբաթ, իրաքանչիւր շաբաթ 45+45 վայրկեան
- 💬 Աշխատանցի լեզուն՝ Գայերեն
- 📅 Վայր՝ դասարան
- 👥 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ 20 աշակերտ
- 📁 Պիտոյք-Պատրաստութիւն՝ քանի մը հատ լուսանկարչական գործիք

## ԹԱՐԱ ՏԵՄԻՐԾԻՕՂԼՈՒ




Աւարտած Է Կիրառական Արուեստի Արհեստավարժարանէն յետոյ Պէթէնթ համալսարանի դերասանութեան բաժինը: Չանագան դերասանական աշխատանոցներու, անխօս հեքեաթ պատմելու, մարմնահարուածային նուագի, ստեղծագործական թատրերգութեան, բանաստեղծական կատակերգութեան, պարի հմտութեան դասարանի նման ուսմունքներով իր աշխատութիւնները զարգացնող Տեմիրճիօղլուն դեր ստանձնած է բազում թատերախաղերու մէջ: «Յանկարծ» խումբի հիմնադիրներէն է եւ խումբի «Մեր Չունեցածը Իրարմով Գտնենք» թատերախաղը 2019 թուականին Սերայիոյ մէջ միջազգային փառատօսի մը մէջ բեմադրուեցաւ: «Անուշ Ըլլալ» ներկայացման մէջ պարեց:

2014 թուականէն առ այսօր Ստեղծագործական Թատրերգութիւն դասաւանդող եւ Սոմայի, Մեծ Կղզիի եւ Գնալը Կղզիի Կազդուրման Կայանի մէջ թատրոնի, թատրերգութեան եւ լուսանկարչութեան աշխատանոցներ վարող Թարա Տեմիրճիօղլուն դերն Գալֆայեան Վարժարանի մէջ կը դասաւանդէ Ստեղծագործական Թատրերգութիւն:



Հազարումէկ հեքեաթ... Երգ ու պար ուրախ զուարթ

# ՓՈՔՐԻԿ ՀԷՔԵԱԹԻ ԹԱՏՐՈՆ ՄԸ



## ԿԱԹԻԼ ՄԸ ՄԵՂՐՈՎ ԹԵ ԴԵՐԱՍԱՆ, ԹԵ ԴԻՏՈՂ

Թումանեանի ամենն յայտնի եւ սիրուած «Կաթիլ մը Մեղր» հեքեաթը փոքրիկներուն հետ կը վերածենք թատերակի մը, **Լարա Նարինի, Թարա Տեմիրճիօղլուի եւ Եղիա Աքլինի** բեմադրութեամբ : Բոլոր մասնակից փոքրիկները դեր կը ստանան այս թատերակին մէջ: Փոքրիկները թէ դերասան կ'ըլլան եւ թէ դիտող:

Նախ կը դիտենք, յետոյ կը գրուցենք, կը հակառակինք, կը փորձենք համոզել զիրար, թէ ի՞նչ իրաւունք ունի, ի՞նչ չունի: Արդեօք այս հեքեաթը ուրիշ ինչպէ՞ս կրնանք եզրակացնել:

### 5, 6, 7, 8-րդ դասարաններ

🕒 Տեւողութիւն՝ 45 վայրկեան

🗨 Աշխատանցի լեզուն՝ **Հայերէն**

📄 Վայր՝ **դասարան կամ վարժարանի սրահը**

👥 Մասնակիցներու առաւելագոյն թիւ՝ **20 աշակերտ**

📁 **Պիտոյք-Պատրաստութիւն՝ Պատրաստութիւն՝ չկայ**



Հազարումէկ հեքեաթ... Երգ ու պար ուրախ զուարթ

**Հաղորդակցութիւն՝**

---

**ՍԵՎԱՆ ԱԹԱՏՈՂՈՒ**

**(0536) 854 64 66**

**sevanataoglu@gmail.com**

**Փոքրիկ**



# Փոքրիկ